Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
սեպտեմբերի 8-ի N 1355 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՂ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման լիցենզիա ստացած անձանց կողմից հաշվետվությունները լիցենզավորող մարմին (այսուհետ՝ լիցենզավորող մարմին) ներկայացվելու հետ կապված հարաբերությունները:

2. Ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման լիցենզիա ստացած անձինք (այսուհետ՝ կազմակերպիչ) լիցենզավորող մարմին են ներկայացնում հետևյալ հաշվետվությունները.

1) յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 20-րդ օրը՝ հաշվետու ամսում եկամուտների և ծախսերի մասին հաշվետվություն՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի N 1355 - Ն որոշման N 2 հավելվածի ձևի.

2) մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 11-ի N 235-Ն որոշմամբ հաստատված հաշվապահական հաշվառման N 1 միջազգային ստանդարտի 10-րդ կետի համաձայն՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ, և համա-

պարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար, ինչպես նաև այդ հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացություն:

3. Սույն կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված հաշվետվությունը կազմակերպիչների կողմից լիցենզավորող մարմին են ներկայացվում հետևյալ ընթացակարգով. հաշվետվությունը ներկայացվում է լիցենզավորող մարմնի քարտուղարություն՝ կից նամակով, որում պետք է նշված լինի՝ ում կողմից է (հաշվետու կազմակերպություն, լիցենզիայի համար) ներկայացվում հաշվետվությունը և որ ժամանակահատվածի համար: Նամակը պետք է ստորագրված լինի կազմակերպչի լիազոր աշխատողի կողմից: Հաշվետվությունը պետք է ձայնագրված լինի ՍԴ-Ռ (CD-R) լազերային սկավառակի վրա՝ Էքսել (Excel) ֆորմատով: Ծրարը պետք է ստորագրված լինի կազմակերպչի լիազոր աշխատողի կողմից և կնքված՝ կազմակերպչի կնիքով (նրա ցանկությամբ): Ծրարի վրա պետք է նշված լինեն հաշվետվությունը ներկայացնելու ամսաթիվը, տարեթիվը, կազմակերպչի անվանումը, լիցենզիայի համարը, ժամանակահատվածը, որի համար ներկայացվում է հաշվետվությունը:

4. Սույն կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված հաշվետվությունը լիցենզավորող մարմին է ներկայացվում առձեռն:

5. Սույն կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված հաշվետվությունները լիցենզավորող մարմին են ներկայացվում թղթային տարբերակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
սեպտեմբերի 8-ի N 1355 - Ն որոշման

Ձև

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն՝

ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՂ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ

Կազմակերպչի անվանումը	
Լիցենզիայի համարը	
Հաշվետու ժամանակահատվածը	
Ներկայացնելու ամսաթիվը	
Ինտերնետային կայքի գրանցված հասցեն	

Եկամուտներ		Ծախսեր		Մասնակիցների ընդհանուր թիվը	
խաղացողների կողմից գնված խաղանիշերի (միավորների) ընդհանուր գումարը	այլ եկամուտներ	վճարված շահումների (խաղադրույքների) ընդհանուր գումարը	այլ ծախսեր	մասնակիցների ընդհանուր թիվը	շահող մասնակիցների ընդհանուր թիվը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ